

ԲՐԲԵՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՇՐՋԱՆ

Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիա

**2022-23 ուս. տարվա ավանդական գլխավոր պայմանագիր միջնակարգ դպրոցի
(6-12-րդ դասարաններ) աշակերտների համար**

Աշակերտի անուն _____ Ծննդյան ամսաթիվ _____
տարիք _____ դասարան _____ տան հեռ. # _____

Տան հասցե _____ քաղաք _____ փոստային կոդ _____

Ծնող/պահապան 1 – անուն _____ աշխ./բջջային հեռ. _____

Ծնող/պահապան 2 – անուն _____ աշխ./բջջային հեռ. _____

Պայմանագրի ժամկետը (չպետք է գերազանցի 1 ուսումնական տարին). Սկսվում է _____ ավարտվում է _____

Արձանագրված դպրոց. ԲԴՄՇ-ի Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիա (ILA)

Շաբաթական հաղորդակցման օր _____

Աշակերտի-ծնողի-ուսուցչի հանդիպման վայր. 1920 W. Clark Ave. (ավտոկայանի հետևի մասի տնակներ), Հեռ. 818-729-5950 x 33907, սեղմել 9

Ղեկավարող ուսուցիչ _____

**ԲՐԲԵՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՇՐՋԱՆԻ ԱՆԿԱՆ (ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Կամավոր հայտարարություն. Անկախ ուսուցման ակադեմիան (ILA), շարունակական կամավոր ընտրովի ծրագիր է, որը չի պահանջում, որ աշակերտները մասնակցեն: Շրջանի բնակության սահմաններից ներս բնակվող աշակերտները կարող են անձամբ ԲԴՄՇ-ի դպրոց հաճախել, իսկ այդ սահմաններից դուրս բնակվող աշակերտները կողորդվեն իրենց բնակության դպրոցական շրջան՝ անձամբ դպրոց հաճախելու համար: Անկախ (ինքնուրույն) ուսուցում կարող է հատկացվել աշակերտի համար միայն այն դեպքում, եթե աշակերտին է առաջակվել այլընտրանքային դասընթաց՝ շարունակական հիմունքներով: (Մաս 48915 կամ 48917) Գլխավոր պայմանագիրը ուժի մեջ է մեկ տարի ժամկետով: (Կրթական կողմից 51747) Ծնողները/պահապանները կարող են երեխային տեղափոխել դպրոց ցանկացած ժամանակ: Այդ տեղափոխությունը կկատարվի ծնողի պահանջը ստանալուց 5 օրվա ընթացքում: (AB 130)

Նպատակները. Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիայի (ILA) նպատակն է, որ աշակերտները յուրաքանչյուր դասն ավարտելու հմտություններ և գիտելիքներ ձեռք բերեն ԲԴՄՇ-ի ավարտական պահանջներին բավարարելու համար: Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիան (ILA) այլընտրանքային ուսումնական ծրագիր չէ: Այս ծրագրի յուրաքանչյուր դասընթացի նպատակը համապատասխանում է դպրոցական շրջանի դասընթացների հետ, որոնք դասավանդվում են ավանդական դպրոցում և նշված են յուրաքանչյուր դասի ծրագրում:

Զեկուցման մեթոդներ. Ղեկավարող ուսուցիչը շաբաթական հաղորդագրությունների միջոցով կտեղեկացնի աշակերտին և ծնողին/պահապանին իր ունեցած մտահոգությունների, աշակերտի առաջադիմության և հաջողությունների մասին: 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների աշակերտներն ամեն օր ուղիղ թերթով կշփվեն ուսուցչի հետ: Բացի դրանից, աշակերտները (6-12-րդ դասարաններ) շաբաթական 1 ժամ առցանց դասեր կստանան: (AB 130) Լրացուցիչ ժամանակ կպահանջվի նաև շրջանի/նահանգային պարտադիր բոլոր քննությունները հանձնելու համար, որոնք սովորաբար կատարվում են խմբակային եղանակով: (Կրթական կողմից 51749.5)

Ուսումնասիրության և գնահատման մեթոդներ. Հանձնարարությունների կատարման համար տրված միջոցառումները, ինչպես նաև յուրաքանչյուր դասից ստացած աշակերտի գնահատականը նշված են ուսումնական ծրագրում և/կամ յուրաքանչյուր դասընթացի հանձնարարություններում: Ամեն շաբաթ, բոլոր հանձնարարությունները պետք է վերահսկվեն և առաջադիմությունը գնահատվի ուսուցչի կողմից այնպես ինչպես ավանդական դպրոցի դասասենյակում: (Կրթական կողմից 51749.5)

Ռեսուրսներ և աջակցություն. Ըստ անհրաժեշտության, ԲԴՄՇ-ն ուսուցչական ծառայություններ, կրթական աջակցություն և խորհրդատվություն կտրամադրի: Յուրաքանչյուր դասընթացի համար պահանջվող տեքստերը, կրթական նյութերը և սարքերը կտրամադրվեն ըստ պահանջի: Դասընթացին յուրահատուկ նյութերը նշված են յուրաքանչյուր դասընթացի ուսումնական ծրագրում: Աշակերտները կստանան ծառայությունների, ռեսուրսների, իրավունքների և արտոնությունների նույն հասանելիություն ինչպես որ ավանդական դպրոցում: (Կրթական կոդեքս 51749.5)

Պայմանագրի ժամանակացույց. Աշակերտները պետք է ավարտեն հանձնարարված աշխատանքը և պահպանեն կատարողականության ամենամիավագազույն մակարդակն Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիայում (ILA) դասերը շարունակելու համար: Աշակերտները պետք է, կիսամյակի ընթացքում, մասնակցեն բոլոր դասերին: Նրանք պետք է ամենօրյա կրթական առաջադիմություն ցուցաբերեն և ենթարկվեն արձանագրության ընթացքում հատկացված դասացուցակին: 5 օրյա շաբաթվա ընթացքում 3-ից ավել հանձնարարություն և/կամ առցանց դաս (ուղիղ եթերով) բաց թողնելու դեպքում, աշակերտները մի քանի քայլից բաղկացած ներգրավվման միջամտություն կստանան, ինչպես նաև ժողով ծնողի հետ և կենթարկվեն շրջանի այլ պատժամիջոցների: Շարունակական բացակայությունը արձանագրման վերանայման կհանգեցնի: Համապատասխան առաջընթաց ցույց չտված և չներգրավված աշակերտները կվերադառնան դպրոց՝ անձամբ հաճախման:

Օրենքները. Աշակերտները պետք է հետևեն դպրոցի բոլոր կանոններին: Անհամապատասխան բառապաշարը և/կամ վարքը կարող է կասեցնել նրանց ծրագրից: Ավելի լուրջ խախտումները, ներառյալ, բայց չսահմանափակվելով որևէ վերահսկվող նյութի, վտանգավոր առարկաների կամ զենքի տիրապետմամբ կամ օգտագործմամբ, կհանգեցնեն Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանից կասեցման կամ հեռացման:

Լրացուցիչ պայմաններ. Աշակերտներն ու ծնողները պատասխանատու են բոլոր դասագրքերի և կրթական նյութերի համար, որոնք տրամադրվել են Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիայի (ILA) կողմից, ինչպես նաև կորստի կամ աշակերտի կողմից վնասվելու դեպքում՝ ֆինանսական պատասխանատվություն կրելու համար: Դրանից բացի, աշակերտները պետք է նշանակված ժամին՝ համապատասխան նյութերով ներկայանան ուսուցչին (կատարված հանձնարարություններով, ընթացքի մեջ եղած աշխատանքով, տեքստով, տետրով և գրելու պարագաներով) և մասնակցեն ուսուցչի կողմից հանձնարարված կրթական միջոցառումներին:

Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիայի ազնվության ուղեցույցները

Աշակերտները չպետք է խեղաթյուրեն քննության նյութերը, հետազոտական նյութերը, դասարանական աշխատանքը և/կամ տնային հանձնարարությունները որպես իրենց սեփական, եթե իրականում դրանք ուրիշի աշխատանքն են:

Կրթական խարդախությունը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

1. Ցանկացած աշխատանք կամ դրա մի մաս, որը աշակերտի սեփական աշխատանքը չէ:
2. Մեկ այլ աշակերտի կամ հեղինակի աշխատանքի կամ դասարանական հանձնարարության արտագրում:
3. Թույլ տալ մեկ այլ աշակերտի արտագրել աշխատանքը կամ դասարանական առաջադրանքը:
4. Ձեր անունը դնել մեկ ուրիշի աշխատանքի/նախագծի վրա:
5. Օգտվել «խաբեության թերթիկից», բջջային հեռախոսից, կայքէջից կամ որևէ չարտոնված գրությունից:
6. Մեկ այլ աշակերտին օգնել անհատական վիկտորինայի/քննության ընթացքում:
7. Կեղծել ուսուցչի տված գնահատականները կամ քննությունների արդյունքները:
8. Գողանալ և/կամ վաճառել վիկտորինայի/քննության* հարցերը (*Այս խախտում կհանգեցնի ինքնաբերաբար դպրոցից կասեցման՝ խախտման լրջության պատճառով:)
9. Օգտվել ուսուցչի ձեռնարկներից/լուծումների պատասխանները պարունակող գրքից/համացանցային կայքէջերի որոնումներից, որոնք պարունակում են պատասխանները:
10. Օգտվել համացանցի նյութերից՝ առանց համապատասխան մեջբերումների կամ վարկավորման:

Գնահատող ուսուցիչը պատասխանատու է որոշել, թե արդյոք տեղի է ունեցել կրթական անազնվություն:

Կիսամյակի 1-ին խախտում.

- Աշակերտը հանձնարարությունից կստանա «0» գնահատական,
- Խախտումը կգրանցվի աշակերտի անձնական գործում,
- Ղեկավարող ուսուցիչը կկապվի ծնողի/պահապանի հետ և կզգուշացնի հետագա խախտումների հնարավոր հետևանքների մասին,
- Կտեղեկացնենք տնօրենին:

2-րդ խախտում նույն կամ կիսամյակի որևէ այլ դասի ընթացքում.

- Եթե դասընթացը A.P. կամ Honors դասարանում է, աշակերտը կարող է տեղափոխվել սովորական դասարան,
- Աշակերտը հանձնարարությունից կստանա «0» գնահատական,
- Աշակերտի գնահատականը կիջնի մեկ միավորով՝ ըստ ուսուցչի և/կամ ղեկավարող ուսուցչի հայեցողության,
- Խախտումը կգրանցվի աշակերտի անձնական գործում,
- Ղեկավարող ուսուցիչը կտեղեկացնի ծնողին/պահապանին և կզգուշացնի հետագա խախտումների հնարավոր հետևանքների մասին,
- Դպրոցի տնօրենը կհանդիպի աշակերտի, ծնողի/պահապանի և ղեկավարող ուսուցչի հետ:

3-րդ կամ հաջորդ խախտումը նույն կամ կիսամյակի որևէ այլ դասի ընթացքում.

- Աշակերտը հանձնարարությունից կստանա «0» գնահատական,
- Աշակերտը կարող է հեռացվել/տանուլ տալ դասը, առանց հաճախման կրեդիտ ստանալու, որի ընթացքում կատարվել է 3-րդ կամ հաջորդ խախտումը,
- Խախտումը կգրանցվի աշակերտի անձնական գործում,
- Դպրոցի տնօրենը կհանդիպի աշակերտի, ծնողի/պահապանի և ղեկավարող ուսուցչի հետ,
- Աշակերտի տեղավորումը Անկախ (ինքնուրույն) ուսուցման ակադեմիայում (ILA) կվերանայվի և նա կարող է վերադառնալ բնակության իր շրջանի դպրոց անձամբ հաճախելու կամ այլընտրանքային դպրոց: school.

Այս պայմանագրի ընթացքում արձանագրված առարկաները (դասընթացները):

Առարկա (դասընթաց)

կրեդիտներ

Առարկա (դասընթաց)

կրեդիտներ

Առարկա (դասընթաց)	կրեդիտներ	Առարկա (դասընթաց)	կրեդիտներ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. Մենք կարդացել ենք մասնակցության վերոհիշյալ պայմանները և համաձայն ենք նշված բոլոր կետերի հետ և հաստատում ենք, որ այս տեղավորումը կամավոր է և կատարվել է աշակերտի ու ծնողի/պահապանի համաձայնությամբ՝ սովորական դասասենյակի փոխարեն: Այս համաձայնագիրը պետք է ստորագրվի մասնակից բոլոր անհատների կողմից՝ դասերը սկսվելուց առաջ: Միայն 2022-2023 ուսումնական տարվա համար դասերը սկսվելուց 30 օրից ոչ ուշ:

Աշակերտի էլ. փոստ _____

Ծնողի էլ. փոստ 1 _____

Ծնողի էլ. փոստ 2 _____

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՍԱԹԻՎ

Աշակերտ _____

Ծնող/պահապան 1 _____

Ծնող/պահապան 2 _____

Ղեկավարող ուսուցիչ _____

Գերատեսչին փոխարինող _____

Այլ _____
